ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
«Հավատարմագրման ազգային մարմին»

ՊՈԱԿ-ի տնօրեն

Ա. Օբոսյան
(անուն, ազգանուն)

« 30 » _հունիսի___ 2023 թ.

N___6-ԿՀ___հրաման

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ (ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՍՏՈՒԳԱՉԱՓՈՒՄ) ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՈՒՄԸ

Հավելված PR-7/AIB-01

ՄՇԱԿԵԼ Է

Կառավարման համակարգի մենեջեր

Ն. Աբգարյան_____
(անվան., ազգանուն, ստորագրություն)

ՍՏՈՒԳԵԼ Է

Հավատարմագրման բաժնի պետ

Ն. Համբարձումյան_____
(անվան., ազգանուն, ստորագրություն)

ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԵԼ Է

Հսկողություն (այդ թվում՝ ստուգաչափում) իրականացնող մարմինների խորհրդատվական տեխնիկական կոմիտեի հետ

Գործարկման թվականը՝___04.07.2023թ.__

Երևան 2023

Բովանդակություն

1. ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏԸ 3
2. ՆՈՐՄԱՏԻՎ ՎԿԱՅԱԿՈՉՈՒՄՆԵՐԸ 3
3. ՏԵՐՄԻՆՆԵՐԸ, ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ և ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԸ 3
4. ՀԻՄ-ԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ....5
4.2 ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՅՏԸ և ԿԻՑ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ....7
4.3 ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ....7
4.3.1 ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ 7
4.3.2 ՏԵՂՈՒՄ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ 7
4.3.3 ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՐՈՇՄԱՆ ԿԱՅԱՑՈՒՄԸ....10
4.4 ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐԸ և ՎԵՐԱՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՈՒՄԸ....11
4.4.1 ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ 11
4.4.1.5 ԱՐՏԱՀԵՐԹ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐԸ 12
4.4.1.6 ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԿԱՅԱՑՈՒՄԸ 12
4.4.1.7 ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ/ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՍՏԱՆԴԱՐՏԻՆ ԱՆՑՈՒՄԸ.... 12
4.5 ՎԵՐԱՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՈՒՄԸ (ՀԵՏԱԳԱ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՈՒՄԸ) 12
4.6 ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՈԼՈՐՏԻ ԸՆԴԼԱՅՆՈՒՄԸ, ԱՐԴԻԱԿԱՆՑՈՒՄԸ, ԿՐՃԱՏՈՒՄԸ, ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԿԱՍԵՑՈՒՄԸ և ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ.... 13
4.6.1 ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՈԼՈՐՏԻ ԸՆԴԼԱՅՆՈՒՄԸ 13
4.6.2 ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՈԼՈՐՏԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄԸ 14
4.6.3 ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՈԼՈՐՏԻ ԿՐՃԱՏՈՒՄԸ.... 14
4.7 ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԿԱՍԵՑՈՒՄԸ, ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ և ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ 15
4.8 ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ.... 15
4.9 ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ և ԳԱՆԳԱՏՆԵՐԸ 16
5. ՀԻՄ-Ի և ԱՐՄՆԱԲ-Ի ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.... 16
6. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԸ.... 16

1. Կիրառման ոլորտը

Սույն փաստաթուղթը սահմանում է «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ԱՐՄՆԱԲ) կողմից իրականացվող հսկողություն այդ թվում՝ ստուգաչափում իրականացնող մարմինների (այսուհետ՝ ՀԻՄ) հավատարմագրման, պարբերական/արտահերթ գնահատման, հավատարմագրման ընդլայնման, կրճատման, վերականգնման, կասեցման, դադարեցման, արդիականացման, վերահավատարմագրման ընթացակարգը և կանոնները:

Սույն փաստաթուղթը հանդիսանում է PR-7 հիմնական փաստաթղթի հավելված, որը ներառում է տվյալ տեսակի համապատասխանության գնահատման մարմնի հավատարմագրման այն պահանջներն ու ընթացակարգը, որոնք սահմանված չեն PR-7-ով:

2. Նորմատիվ վկայակոչումները

Առանց տարեթվի վկայակոչված փաստաթղթերը կիրառելի են միայն վերջին հրատարակությամբ: Սույն փաստաթղթում վկայակոչված փաստաթղթերը ներկայացված են ԱՐՄՆԱԲ-ի կողմից մշակված «AC-4.6 Հավատարմագրման ընդհանուր չափանիշները և փաստաթղթերի ցանկը» փաստաթղթում:

EA-ի և ILAC-ի փաստաթղթերը տեղադրված են հետևյալ կայքերում՝

EA: http://www.european-accreditation.org, ILAC: http://www.ilac.org:

3. Տերմինները, սահմանումները և հապավումները

3.1 Սույն ընթացակարգում կիրառված են «Հավատարմագրման մասին» ՀՀ օրենքով, ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17000, ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17011 ստանդարտներով, PR-7 ընթացակարգով սահմանված, ինչպես նաև հետևյալ տերմիններն ու սահմանումները՝

հսկողության տեսակ՝ ինչպես սահմանված է ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17020 ստանդարտի 4.1.6 կետում և Հավելված Ա-ում (որը նշված է որպես «անկախության մակարդակ»).

հսկողություն՝ արտադրանքի, գործընթացի, ծառայության կամ տեղակայման կամ դրանց նախագծման ուսումնասիրություն և կոնկրետ պահանջներին կամ, մասնագիտական դատողության հիման վրա, ընդհանուր պահանջներին դրանց համապատասխանության որոշում.

հսկողություն իրականացնող մարմին՝ մարմին, որն իրականացնում է հսկողություն.

հիմնական գործունեության իրականացման վայր՝ տարածք, որտեղ իրականացվում է առնվազն մեկ հիմնական գործունեություն՝ ներառյալ քաղաքականության սահմանում, փաստաթղթերի մշակման գործընթաց և(կամ) ընթացակարգ, պայմանագրի վերլուծություն, հսկողության պլանավորում և վերլուծություն, հսկողության արդյունքների վերաբերյալ որոշման ընդունում և հաստատում.

չափման միջոցների ստուգաչափում՝ գործողությունների ամբողջություն, որն ապահովում է օբյեկտիվ տվյալներ այն մասին, որ չափման միջոցը բավարարում է սահմանված պահանջները: Չափման միջոցների ստուգաչափումը լինում է ընտրանքային, առաջնային, կրկնակի, պարտադիր պարբերաբար կատարվող և կամավոր.

ստուգաչափման մեթոդիկա՝ ընթացակարգ, որը սահմանում է ստուգաչափումն իրականացնելու մանրամասն նկարագրություն, ինչպես նաև ստուգաչափում իրականացնելու համար օգտագործվող չափանմուշներին և օժանդակ սարքերին ներկայացվող պահանջներ:

3.2 Հապավումները

- ՀՀ՝ Հայաստանի Հանրապետություն,
- ԵԱՏՄ՝ Եվրասիական տնտեսական միություն,
- ԵԱՏՀ՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողով,

- ԱՐՄՆԱԲ՝ «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ,

- ՀԳՄ՝ համապատասխանության գնահատման մարմին,

- ՀԿ՝ հավատարմագրման կոմիտե,

- ՀԻՄ՝ հսկողություն իրականացնող մարմին,

- EA՝ Հավատարմագրման Եվրոպական համագործակցություն,

- ILAC՝ Լաբորատորիաների միջազգային հավատարմագրման համագործակցություն:

4. ՀԻՄ-ին ներկայացվող պահանջները

4.1 Հավատարմագրման պահանջները սահմանված են PR-7 ընթացակարգում, ինչպես նաև ստորև.

1) Կառավարման համակարգի առկայություն և կառավարման համակարգի փաստաթղթերում սահմանված պահանջներին հետևում,

2) վկայություններ իր գործունեության ընթացքում պատճառված վնասները փոխհատուցելու համար (օրինակ՝ ապահովագրություն կամ տեղեկատվություն պահուստների վերաբերյալ),

4) նորմատիվ իրավական ակտերի, ստանդարտացման փաստաթղթերի և հսկողություն իրականացնելու համար անհրաժեշտ այլ փաստաթղթերի առկայություն,

5) հսկողություն իրականացնող մարմնի հաստիքացուցակում հավատարմագրման ոլորտին համապատասխան գործունեության բոլոր ուղղություններով այնպիսի մասնագետների առկայություն, որոնք՝

- աշխատանքային պայմանագրի հիման վրա համապատասխանության գնահատման գործունեություն են իրականացնում հսկողություն իրականացնող մեկ մարմնում,

- հավատարմագրման ոլորտին համապատասխան ոլորտային և/կամ հսկողություն իրականացնելու աշխատանքային փորձ և որակավորման (բացառությամբ՝ ռազմական և երկակի նշանակության ապրանքների փորձաքննություն իրականացնող փորձագետների) վկայական, որը տրամադրվել է ԻՍՕ/ԻԷԿ 17024

ստանդարտին համապատասխան հավատարմագրված անձանց սերտիֆիկացման մարմնի կամ համապատասխան ոլորտի լիազոր մարմնի կողմից,

- իրենց ոլորտին առնչվող վերապատրաստման դասընթացներին մասնակցություն (սերտիֆիկատներ ԻՍՕ/ԻԷԿ 17020 ստանդարտի և այլ փաստաթղթերի պահանջներին համապատասխան),

Աշխատակիցների փոխարինելությունը կարող է ապահովվել քաղաքացիաիրավական պայմանագրային հիմունքով ընդունված մեկ այլ հսկողութուն իրականացնող մարմնում աշխատող փորձագետի միջոցով,

6) եթե ՀԻՄ-ը կիրառում է գործիքներ, չափման միջոցներ իր համապատասխանության գնահատման գործունեությունը իրականացնելու համար, ապա պետք է ապահովի դրանց համապատասխանությունը չափագիտական հետևելիության պահանջներին (տես ILAC P-10) (ճշգրտության, տրամաչափումների, հետևելիության, չափագիտական հաստատման), նույնիսկ եթե նա չի կիրառում այդ չափման միջոցները, այլ կիրառում է հայտատուն, ենթակապալառուն և այլն:

ՀԻՄ-ը պետք է ապահովի, որ բոլոր չափման միջոցների վերաբերյալ գրառումները պատշաճ կերպով պահպանվեն՝ փաստաթղթավորված փաստաթղթերին համապատասխան:

7) Եթե տրամաչափարկումը գերիշխող գործոն չէ հսկողության կամ փորձարկման համար, ապա ՀԻՄ-ը պետք է ներկայացնի գրավոր քանակական ապացույց՝ ցույց տալու համար, որ տրամաչափարկումը էական ազդեցություն չունի համապատասխան չափումների և անորոշությունների արդյունքի վրա և, հետևաբար, անհրաժեշտ չէ ցույց տալ չափագիտական հետևելիությունը (տե՛ս ILAC P-10): Սա վերաբերում է այն ՀԻՄ-ներին, որոնք պետք է կատարեն ինդիկատիվ չափումներ, երբ գործիքի առավելագույն թույլատրելի սխալը (ինչպես հայտարարվում է արտադրողի կողմից) զգալիորեն պակաս է չափման համար պահանջվող ճշգրտությունից, և երբ օպերատորի կողմից չափումների կատարման եղանակները կարող է շատ ավելի մեծ ազդեցություն ունենալ գործիքի սխալի վրա (օրինակ՝ շինհրապարակում չափման ժապավենով գծային չափում. եթե չափումը չի կատարվում ուշադիր՝ հետևելով երկու կետերը միավորող

ուղիղ գծին, ապա թույլատրելի սխալանքը կարող է զգալիորեն ավելի մեծ լինել, քան այն սխալանքը, որը հայտարարվել է հենց չափիչ ժապավենի արտադրողի կողմից),

8) հսկողության հաշվետվությունները/եզրակացությունները, որտեղ անհրաժեշտ է նշել նաև անորոշությունները, ապա ՀԻՄ-ը պետք է դրանք հաշվարկի (ԻՍՕ 10012, ԻՍՕ/ԻԷԿ 14253-2):

4.2 Հավատարմագրման հայտը և կից փաստաթղթերը

ՀԻՄ-ը ԱՐՄՆԱԲ-ին է ներկայացնում լրացված հայտը և դրան կից փաստաթղթերը՝ համաձայն AIB-01-01 - AIB-01-07 հավելվածների, ստուգաչափում իրականացնող մարմիններինը՝ համաձայն AIB-02-01 - AIB-02-09 հավելվածների, որոնց ձևաչափերը տեղադրված են ԱՐՄՆԱԲ-ի պաշտոնական կայքում՝ www.armnab.am:

Հավատարմագրման հայտի և կից փաստաթղթերի ընդունման, լրակազմի ստուգման, ռեսուրսների վերլուծության և հայտի գրանցման ընթացակարգը սահմանված է PR-7-ում, որը տեղադրված է www.armnab.am կայքում:

4.3 *Հավատարմագրման գործընթացը*

4.3.1 Փաստաթղթերի փորձաքննությունը

4.3.1.1 ՀԻՄ-ի կողմից համապատասխան վճարումը կատարելուց և գնահատման խումբը հաստատվելուց հետո սկսվում է հավատարմագրման հայտի և կից փաստաթղթերի փորձաքննությունը՝ համաձայն PR-7-ի:

4.3.2 Տեղում գնահատումը

4.3.2.1 Գնահատման նպատակն է հավաստել ՀԻՄ-ի գործունեության համապատասխանությունը սույն ընթացակարգին և այլ կիրառելի ընդհանուր ու ոլորտային նորմատիվ փաստաթղթերին, ՀԻՄ-ի կառավարման համակարգի փաստաթղթերին (որակի ձեռնարկ, հսկողության փաստաթղթեր, ընթացակարգեր, հրահանգներ, անձնակազմի որակավորում և այլն), իսկ ստուգաչափման լաբորատորիաների դեպքում նաև «Չափումների միասնականության մասին» ՀՀ օրենքին ու ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի 2018թ.-ի փետրվարի 19-ի N 133-Ն հրամանի Հավելված N 1-ով հաստատված «Չափման միջոցի ստուգաչափման կազմակերպման և իրականացման» կարգին:

4.3.2.2 Տեղում գնահատման ժամանակահատվածը (օր/մարդ) որոշվում է համաձայն հսկողության առանձնահատկությունների, ինչպիսիք են հսկոսղության ենթակա օբյեկտների քանակն ու բարդությունը, ռիսկայնությունը, նորմատիվ կարգավորումները, տեխնիկական կանոնակարգերն ու ընթացակարգերը, գնահատման ենթակա վայրերի քանակը, կամավոր/պարտադիր ոլորտը և այլ գործոններ, օրինակ՝ փաստաթղթերի փորձաքննության ժամանակ հայտնաբերված անհամապատասխանությունների քանակը, ՀԳՄ-ի գործունեության վայրի հեռավորությունը և այլն:

4.3.2.3 Կիրառվում են գնահատման հետևյալ տեխնիկաները՝

- **տեղում գնահատում՝** ՀԻՄ-ի գլխավոր գրասենյակում և ցանկացած գործող միավորներում կամ մասնաճյուղերում, որտեղ իրականացվում է համապատասխանության գնահատման գործունեությունը: Տեղում գնահատման ընթացքում գնահատվում է կառավարման համակարգը և հսկողության գործընթացը: Տեղում գնահատման արդյունքում կազմվում է հաշվետվություն՝ համաձայն AIB-01-01-R, AIB-02-01-R և AIB-01-01-AR, AIB-02-01-AR հավելվածների,

- **հեռավար գնահատում՝** ՀԻՄ-ի գնահատում ըստ գործունեության իրականացման կամ վիրտուալ վայրի՝ էլեկտրոնային կապի միջոցների կիրառմամբ:

Հեռավար գնաատումն իրականացվում է բացառիկ դեպքերում, օրինակ՝ անհաղթահարելի ուժի ազդեցությունների (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ), համաճարակային հիվանդությունների, գնահատողի/տեխնիկական փորձագետի տեղում մասնակցության անհնարինության և այլ հիմնավորված դեպքերում,

- **գրառումների (գործի) վերլուծություն՝** գրառումների (գործի) վերլուծություն՝ ՀԳՄ-ի եզրակացությունների, հաշվետվությունների, ստուգաչափման սերտիֆիկատների և այլ համապատասխան փաստաթղթերի (թղթային և/կամ ֆայլային) ստուգում:

Գրառումների (գործի) վերլուծությունը ընտրված ներկայացուցչական նմուշի (եզրակացության/հաշվետվության/սերտիֆիկատի) գնահատումն է բոլոր տեսանկյուններից:

- **փաստաթղթերի վերլուծություն՝** ՀԳՄ-ի փաստաթղթերի ստուգում:

Փաստաթղթերի վերլուծությունը կիրառվում է ՀԳՄ-ի կառավարման համակարգի տարրերի գործառնության արդյունավետությունը գնահատելու համար,

- **հարցազրույցների վարում՝** ՀԻՄ-ի աշխատակիցների հետ հարցազրույց,

- **որակավորման ստուգման և այլ միջլաբորատոր համեմատությունների իրականացման վերլուծություն՝** PT պրովայդերի կամ այլ լաբորատորիաների հետ միջլաբորատոր համեմատությունների միջոցով փորձարկման արդյունքների գնահատում,

- **վալիդացման աուդիտներ՝** լաբորատորիայի կողմից իրականացրած մեթոդների վալիդացման արդյունքների գնահատում,

- **չափման աուդիտներ՝** լաբորատորիայի կողմից իրականացված չափման արդյունքների գնահատում,

- **գործունեության հետևում (witnessing)՝** հավատարմագրման մարմնի կողմից հավատարմագրման ոլորտի սահմաններում ՀԻՄ-ի համապատասխանության գնահատման գործունեության հետևում հայտատուների գործունեության իրականացման վայրերում:

Եթե ՀԻՄ-ն իր գործունեությունը իրականացնում է տարբեր վայրերում, ապա ԱՐՄՆԱԲ-ը վերը նշված գործառույթներն (witnessing) իրականացնում է յուրաքանչյուր գործունեության իրականացման վայրում առնվազն մեկ անգամ:

Գործունեության հետևումը գնահատման/պարբերական գնահատման ընթացակարգերի բաղադրիչ մասն է: Գործունեության հետևման հետ կապված գործողություններն անհրաժեշտ է համաձայնեցնել ՀԻՄ-ի հետ, այնուհետև ներառել գնահատման պլանում/ծրագրում: Գնահատման պլանը/ծրագիրն ընդգրկում է գնահատման ենթակա գործողությունները, գործունեության իրականացման վայր(եր)ը, գնահատման ենթակա անձնակազմը (անհրաժեշտության դեպքում) և գնահատման տեխնիկաները, ներառյալ գործունեության հետևումը: Եթե գնահատման ժամանակահատվածում հնարավոր չէ կազմակերպել ՀԻՄ-ի գործունեության հետևում (հայտատուի կողմից հսկողության հայտ(եր)ի բացակայության դեպքում), ՀԻՄ-ն

հավատարմագրվում է այն պայմանով, որ առաջին հայտը ստանալու դեպքում պետք է այդ մասին տեղեկացնի ԱՐՄՆԱԲ-ին՝ գործունեության հետևումն իրականացնելու համար, սակայն ոչ ուշ քան մեկ տարվա ընթացքում (մինչև հաջորդ պարբերական գնահատումը) պետք է գնահատվի յուրաքանչյուր կամ հարակից ուղղությամբ առնվազն մեկ ներկայացուցչական նմուշ՝ համաձայն հավատարմագրման ոլորտի: Հավատարմագրման ցիկլի ընթացքում ՀԻՄ-ի գործունեությանը և անձնակազմին հետևելու քանակը սահմանվում է այնպես, որ գնահատվի ամբողջ հավատարմագրման/ընդլայնման ոլորտը:

ՀԻՄ-ի գործունեության հետևումը կարելի է իրականացնել տեղում գնահատման ժամանակահատվածից դուրս՝ համաձայն ՀԻՄ-ի կողմից ներկայացված գրության (ծրագրի):

Եթե գնահատման ժամանակատվածում ՀԻՄ-ում բացակայում են հսկողության հայտեր, ապա գործունեությանը հետևելու տեխնիկան իրականացվում է փաստաթղթերի, գրառումների վերլուծության և հարցազրույցի տեխնիկաների միջոցով, մինչև առաջին հայտը ստանալը:

Գործունեությանը հետևելու արդյունքում կազմվում է հաշվետվություն համաձայն AIB-01-PWR կամ AIB-02-PWR հավելվածի:

4.3.2.4 Գնահատման ընթացքը, ինչպես նաև անհամապատասխանությունների հայտնաբերումն ու դասակարգումը սահմանված է PR-7 ընթացակարգում:

4.3.3 Հավատարմագրման վերաբերյալ որոշման կայացումը

Հավատարմագրման վերաբերյալ որոշման կայացման և հավատարմագրման վկայականի ու ոլորտի տրամադրման գործընթացը սահմանված է PR-7 ընթացակարգում:

Եթե գնահատման ժամանակահատվածում հնարավոր չէ կազմակերպել ՀԻՄ-ի գործունեության հետևում (հայտատուի կողմից հսկողության հայտ(եր)ի բացակայության դեպքում), ՀԻՄ-ն հավատարմագրվում է այն պայմանով, որ առաջին հայտը ստանալու դեպքում պետք է այդ մասին տեղեկացնի ԱՐՄՆԱԲ-ին՝ գործունեության հետևումն իրականացնելու համար:

4.4 Գնահատումները և վերահավատարմագրումը

4.4.1 Պարբերական գնահատումը

4.4.1.1 Պարբերական գնահատման ընթացակարգը սահմանված է PR-7-ում՝ հաշվի առնելով ներքոհիշյալ պահանջները:

4.4.1.2 Նախքան պլանավորված պարբերական գնահատումը ՀԻՄ-ն առնվազն 10 աշխատանքային օր առաջ պետք է էլեկտրոնային փոստով ԱՐՄՆԱԲ-ին ուղարկի հետևյալ փաստաթղթերը՝

- փոփոխված փաստաթղթերի ցանկը և փաստաթղթերը (թղթային և/կամ էլեկտրոնային)՝ համաձայն Հավելված Գ ձևաչափի,

- տեղեկատվություն հավատարմագրման ոլորտի շրջանակներում տրված համապատասխանության գնահատման փաստաթղթերի վերաբերյալ՝ հաշված նախորդ գնահատումից՝ համաձայն Հավելված Բ-ի:

4.4.1.3 Պարբերական գնահատման ծրագիրը կազմելիս գնահատման խմբի ղեկավարը իրականցնում է ռիսկերի վերլուծություն՝ հաշվի առնելով նախորդ գնահատումների արդյունքները այնպես, որ հավատարմագրման ցիկլի ընթացքում գնահատվեն ՀԻՄ-ի գործունեության բոլոր ոլորտները՝ համաձայն հսկողության օբյեկտի տեսակի: Ներկայացուցչական նմուշն ընտվում է՝ հաշվի առնելով ՀԻՄ-ի անձնակազմի փոփոխությունները, ՀԻՄ-ի գործունեության իրականացման տեղամասերի (մասնաճյուղերի) քանակը, տրված համապատասխանության գնահատման փաստաթղթերի քանակը, պարտադիր/կանոնակարգման հսկողության ոլորտը, ռիսկային օբյեկտ հանդիսանալը, գանգատները և բողոքները և այլն:

Ծանոթություն 1. Հավատարմագրման ցիկլում գնահատումները պլանավորելիս ընտրվում են այն անձինք, ովքեր նախորդ գնահատումների ընթացքում չեն գնահատվել գործունեությանը հետևելու տեխնիկայով:

Ծանոթություն 2. Եթե ՀԻՄ-ն իր գործունեությունն իրականացնում է տարբեր հասցեներում (մասնաճյուղերում), ապա պարբերական գնահատումներն

իրականացվում են գլխավոր գրասենյակում և բոլոր մասնաճյուղերում: Հավատարմագրման ցիկլում պետք է գնահատվեն բոլոր մասնաճյուղերը:

4.4.1.4 Պարբերական գնահատման ժամանակահատվածը (օր/մարդ) որոշվում է համաձայն հսկողության առանձնահատկությունների, ինչպիսիք են հսկողության օբյեկտի վտանգավորությունը/ռիսկայնությունը, տեխնիկական կանոնակարգերն ու ընթացակարգերը/մոդուլները, գնահատման ենթակա վայրերի քանակը, կամավոր/պարտադիր հսկողության ոլորտը և այլ գործոններ, օրինակ՝ նախորդ գնահատումների ժամանակ հայտնաբերված անհամապատասխանությունները, ստացված գանգատները, հավատարմագրման ոլորտի ընդլայնումը, կրճատումը, կասեցումը, ՀԳՄ-ի գործունեության վայրի հեռավորությունը և այլն:

4.4.1.5 Արտահերթ գնահատումները

Արտահերթ գնահատման ընթացակարգը սահմանված է PR-7-ում:

4.4.1.6 Համապատասխան որոշման կայացումը

Պարբերական/արտահերթ գնահատման արդյունքների հիման վրա ՀԿ-ն ընդունում է հավատարմագրումը պահպանելու, կրճատելու, ընդլայնելու, վերականգնելու, կասեցնելու, դադարեցնելու վերաբերյալ որոշում:

4.4.1.7 Հավատարմագրման չափանիշների փոփոխությունը, այդ թվում՝ հավատարմագրման/հսկողության նոր ստանդարտին անցումը

Եթե հավատարմագրման/հսկողությանան ստանդարտը արդիականացվում կամ փոփոխվում է, ապա ՀԻՄ-ն պարտավոր է ցույցադրել, որ ունի համապատասխան ընթացակարգ և իրազեկություն նոր/փոփոխված ստանդարտով սահմանված գործունեությունն իրականացնելու համար:

Հավատարմագրման չափանիշների փոփոխության հետևանքով գնահատման ընթացակարգը սահմանված է PR-7-ում:

4.5 Վերահավատարմագրումը (հետագա հավատարմագրումը)

4.5.1 Վերահավատարմագրման ընթացակարգը սահմանված է/սահմանված է PR-7-ում:

4.5.2 Վերահատարմագրման վերաբերյալ որոշման կայացումը

Վերահավատարմագրման վերաբերյալ որոշման կայացման և հավատարմագրման վկայականի ու ոլորտի տրամադրման գործընթացը սահմանված է PR-7 ընթացակարգում:

Եթե գնահատման ժամանակահատվածում հնարավոր չէ կազմակերպել ՀԻՄ-ի գործունեության հետևում (հայտատուի կողմից հսկողության հայտ(եր)ի բացակայության դեպքում), ՀԻՄ-ն հավատարմագրվում է այն պայմանով, որ առաջին հայտը ստանալու դեպքում պետք է այդ մասին տեղեկացնի ԱՐՄՆԱԲ-ին՝ գործունեության հետևումն իրականացնելու համար:

4.6 Հավատարմագրման ոլորտի ընդլայնումը, արդիականացումը, կրճատումը, հավատարմագրման կասեցումը և դադարեցումը

4.6.1 Հավատարմագրման ոլորտի ընդլայնումը

4.6.1.1 ՀԻՄ-ն հավատարմագրման ոլորտի ընդլայնման նպատակով ԱՐՄՆԱԲ-ին է ներկայացնում հավատարմագրման ընդլայնման հայտը և կից փաստաթղթերը, որոնց ձևաչափերը տեղադրված են ԱՐՄՆԱԲ-ի կայքում: Անհրաժեշտ տվյալների ու փաստաթղթերի բացակայության կամ թերի լինելու դեպքում ԱՐՄՆԱԲ-ը կարող է պահանջել լրացուցիչ փաստաթղթեր:

4.6.1.2 Հավատարմագրման ոլորտի ընդլայնման գործընթացի պլանավորումը և գնահատումը կատարվում է այնպես, ինչպես հավատարմագրման գործընթացը՝ համաձայն PR-7-ի և PR-7.10-7.11-ի:

4.6.1.3 ՀԻՄ-ն իրավունք ունի վկայակոչել իր հավատարմագրված լինելը միայն ընդլայնված ոլորտը հավատարմագրելուց հետո:

4.6.1.4 Հավատարմագրման ոլորտի ընդլայնման գործընթացը կարող է համատեղվել ՀԻՄ-ի պարբերական գնահատման հետ: Այս դեպքում ՀԻՄ-ն հայտը ներկայացնում է նշված գնահատումից առնվազն 2 ամիս առաջ:

4.6.1.5 Հավատարմագրման ոլորտի ընդլայնման վավերականության ժամկետ է սահմանվում ՀԻՄ-ի հավատարմագրման ժամկետի ավարտը:

4.6.1.6 Հավատարմագրման կասեցման ժամանակահատվածում կամ հավատարմագրման պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու դեպքում ՀԻՄ-ն չի կարող ներկայացնել հավատարմագրման ընդլայնման, ինչպես նաև վերահավատարմագրման հայտ:

4.6.1.7 Հավատարմագրման ընդլայնման դեպքում իրականացվում է հավատարմագրման վկայագրի վերաձևակերպում: Հավատարմագրման վկայագրին կցվում է հավատարմագրման ոլորտի ընդլայնված մասը կամ փոփոխված հավատարմագրման ոլորտի հավելվածը, ինչի մասին համապատասխան նշում է կատարվում հավատարմագրված ՀԳՄ-ների ռեեստրում և գրանցամատյանում՝ համաձայն Ա հավելվածի:

4.6.2 Հավատարմագրման ոլորտի արդիականացումը

4.6.2.1 ՀԻՄ-ն հավատարմագրման ոլորտի արդիականացման համար ԱՐՄՆԱԲ-ին է ներկայացնում արդիականացման ենթակա հավատարմագրման ոլորտը և կից փաստաթղթերը: Արդիականացման գործընթացի ժամանակ տեղում գնահատում չի իրականացվում, ինչպես նաև չի նախատեսվում հավատարմագրման վկայագրի վերաձևակերպում: Արդիականացման գործընթացը սահմանված է PR-03 և PR-7 ընթացակարգերում:

4.6.3 Հավատարմագրման ոլորտի կրճատումը

4.6.3.1 Հավատարմագրման կրճատումը կատարվում է համաձայն PR-7.10-7.11 և PR-7 ընթացակարգերի՝

- ՀԳՄ-ի դիմումի համաձայն,

- հավատարմագրման կասեցման հիմքերը սահմանված ժամկետում չվերացնելու դեպքում,

- պարբերական/արտահերթ գնահատման, գործունեությանը հետևելու արդյունքում,

- այն դեպքում, եթե հավատարմագրվելուց/հավատարմագրումը ընդլայնելուց հետո 12 ամսվա ընթացքում ՀԳՄ-ի կողմից գործունեության հետևման (witnessing) դիմում/գրություն չի ներկայացվել, ինչի արդյունքում ԱՐՄՆԱԲ-ի կողմից տվյալ

հսկողության օբյեկտով գործունեության հետևում չի իրականացվել, բացառությամբ այն դեպքերի, երբ ՀԻՄ-ն այդ ժամանակահատվածում հայտեր չի ստացել:

4.6.3.2 Հավատարմագրման կրճատման դեպքում իրականացվում է հավատարմագրման վկայագրի վերաձևակերպում: Հավատարմագրման վկայագրին կցվում է հավատարմագրման ոլորտի կրճատված մասը կամ փոփոխված հավատարմագրման ոլորտի հավելվածը, ինչի մասին համապատասխան նշում է կատարվում հավատարմագրված ՀԳՄ-ների ռեեստրում և գրանցամատյանում՝ համաձայն Ա հավելվածի:

4.7 Հավատարմագրման կասեցումը, դադարեցումը և վերականգնումը

4.7.1 Հավատարմագրման կասեցման և դադարեցման հիմքերը ու ընթացակարգը սահմանված է PR-7 ընթացակարգում:

4.7.2 Եթե ՀԻՄ-ի հավատարմագրումը դադարեցվում է արտահերթ/պարբերական գնահատման, գործունեության հետևման արդյունքում կամ ՀԻՄ-ի դիմումի համաձայն, ապա վերջինների կողմից տրված համապատասխանության գնահատման փաստաթղթերը գործում են մինչև դրանց ժամկետի ավարտը, բացառությամբ այն ոլորտների, որտեղ ոլորտի համապատասխան պետական լիազոր մարմինների կողմից այլ պահանջներ սահմանված չեն, կամ մինչև առաջին համապատասխանության հսկողությունը (եթե կիրառելի է), իսկ գնահատման գործընթացի խախտումներով տրամադրված համապատասխանության գնահատման փաստաթղթերը դադարեցվում են:

4.8 Հավատարմագրման վերականգնումը

4.8.1 Հավատարմագրման կասեցումից հետո հավատարմագրումը վերականգնվում է արտահերթ կամ պարբերական գնահատման միջոցով՝ իրականացնելով հետևյալ գործընթացներից մեկը կամ մի քանիսը.

- փաստաթղթերի փորձաքննություն,
- տեղում գնահատում,
- գործունեության հետևում:

4.8.2 Հավատարմագրման վերականգման ընթացակարգը սահմանված է PR-7 ընթացակարգում:

4.9 Բողոքարկումը և գանգատները

4.9.1 Բողոքարկման քննարկման ընթացակարգը սահմանված է K-04 կարգում, իսկ գանգատներինը՝ PR-7.12 ընթացակարգում, որոնք տեղադրված են www.armnab.am կայքում:

5. ՀԻՄ-ի և ԱՐՄՆԱԲ-ի պարտավորությունները

5.1 Պարտավորությունները սահմանված են ՀԻՄ-ի և ԱՐՄՆԱԲ-ի միջև կնքվող Մինչհավատարմագրման, Հավատարմագրման պայմանագրերում, ինչպես նաև սույն փաստաթղթի 5-րդ բաժնում:

5.2 ԱՐՄՆԱԲ-ի և հավատարմագրված կամ հավատարմագրմանը հավակնող ՀԻՄ-ի, կամ ՀԻՄ-ի և հայտատուի միջև հարաբերություններին վերաբերող ողջ տեղեկատվությունը պետք է լինի գաղտնի, ուստի ԱՐՄՆԱԲ-ը ՀԻՄ-ի վերաբերյալ տեղեկատվություն է տրամադրում երրորդ կողմին, եթե՝

- տեղեկատվության հրապարակումը նախատեսված է հավատարմագրման կամ հսկողության ստանդարտներով/կանոններով,
- սահմանված է օրենքով կամ լիազոր մարմինների կողմից,
- հարցումը իր հիմնավորմամբ ԱՐՄՆԱԲ-ին է ուղարկվում ԵԱՏՄ, EA, ILAC հավատարմագրման կազմակերպություններին ստորագրող կողմ հանդիսացող մեկ այլ հավատարմագրման մարմնի կողմից,
- տեղեկատվության տրամադրումն իրականացվում է բոլոր ներգրավված կողմերի բացահայտ և միաձայն համաձայնությամբ:

6. Հավելվածները

Հավելված Ա - Հավատարմագրված հսկողություն իրականացնող մարմինների գրանցամատյանի ձևաչափ

Հավելված Բ - Տեղեկատվություն հսկողություն իրականացնող մարմնի կողմից տրված համապատասխանության գնահատման փաստաթղթերի վերաբերյալ

Հավելված Գ - փոփոխված փաստաթղթերի ցանկի և փաստաթղթերի ձևաչափ

Հավելվածներ AIB-01-01 – AIB-01-07 – Հսկողություն իրականացնող մարմինների հայտի և դրան կից փաստաթղթերի ձևաչափեր

Հավելվածներ AIB-02-01 – AIB-02-09 – Հսկողություն (ստուգաչափում) իրականացնող մարմինների հայտի և դրան կից փաստաթղթերի ձևաչափեր

Հավելված AIB-01-DR, Հավելված AIB-02-DR – Փաստաթղթերի փորձաքննության վերաբերյալ հաշվետվության ձևաչափ՝ ըստ ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17020-2013 ստանդարտի

Հավելված AIB-01-R, Հավելված AIB-02-R – ՀԳՄ-ի ըստ գործունեության իրականացման վայրի գնահատման վերաբերյալ հաշվետվության ձևաչափ՝ ըստ ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17020-2013 ստանդարտի

Հավելված AIB-01-AR, Հավելված AIB-02-AR – ՀԳՄ-ի ըստ գործունեության իրականացման վայրի գնահատման վերաբերյալ լրացուցիչ հաշվետվության ձևաչափ՝ ըստ ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17020-2013 ստանդարտի

Հավելված AIB-01-WR, Հավելված AIB-02-WR – Հսկողություն իրականացնող մարմնի գործունեությանը հետևելու հաշվետվության ձևաչափ

Հավելված Ա

Հավատարմագրված հսկողություն իրականացնող մարմինների գրանցամատյանի ձևը

Հ/Հ	Հավատար-մագրման վկայագրի գրանցման համարը, ՀԳՄ-ի եզակի (չկրկնվող) գրանցա-համարը	Հավատար-մագրման վկայագրի հանձնման թվականը և գործողու-թյան ժամկետը	Հսկողու-թյուն իրա-կանացնող մարմնի անվանումը, գործունեու թյան իրականաց ման վայր(եր)ը, կապի մի-ջոցները, ղեկավարի տվյալները	Իրավաբան ական անձի անվանումը (որի կազմում գործում է մարմինը), հասցեն, կապի միջոցների, ղեկավարի տվյալները	Հավատար-մագրման ոլորտում նշված հսկողու-թյան տեսակը և ոլորտը	Տեղեկա-տվություն օտարերկրյա հավատար-մագրման մարմինների կողմից հավատար-մագրման վերաբերյալ	Փոփո-խութ-յունը	Ծանո-թություն

Հավելված Բ

Տեղեկատվություն հսկողություն իրականացնող մարմնի կողմից տրված համապատասխանության գնահատման փաստաթղթերի վերաբերյալ

Հ/h	**Հսկողության/ստուգաչափման առարկան**	**Տեխնիկական կանոնակարգի նշագիրը, ՀՀ կառավարության որոշման համարը, ստուգաչափման ընթացակարգի նշագիրը**	**Տրված փորձաքննության եզրակացությունների/ստուգաչափման վկայականների քանակը, հատ**
20 թ.			

Հավելված Գ

Փոփոխված փաստաթղթերի ցանկի և փաստաթղթերի ձևաչափը

Նախորդ գնահատումից հետո փոփոխված փաստաթղթերի ցանկը և փաստաթղթերը

(ՀԳՄ-ի անվանումը)

Հ/Հ	Փաստաթղթի անվանումը	Փոփոխվել է	Չի փոփոխվել	Փոփոխության համարը, ամսաթիվը
1	**2**	**3**	**4**	**5**
1.	Կառավարման համակարգի փաստաթղթի նշագիրը, անվանումը	☐	☐	
	1.1 Օրինակ՝ QM-01 Կառավարման համակարգի ձեռնարկ			
	1.2 P-01 Որակի քաղաքականություն			
	1.3 ….. ընթացակարգ, կարգ և այլն			
2.	Տեղեկատվություն սենք(եր)ի վերաբերյալ*	☐	☐	
3.	Տեղեկատվություն համապատասխանության գնահատման գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ չափման միջոցների վերաբերյալ*	☐	☐	
4.	Կիրառվող ստանդարտների, ընթացակարգերի, տեխնիկական կանոնակարգերի և իրավական ակտերի ցանկը*	☐	☐	
5.	Հսկողություն իրականացնող մարմնի անձնակազմը*	☐	☐	
6.	Տեղեկատվություն կազմակերպական կառուցվածքի վերաբերյալ	☐	☐	
7.	Փոփոխված անձնակազմի աշխատանքային փորձը և որակավորման/վերապատրաստման դասընթացներին մասնակցությունը հավաստող փաստաթղթերը	☐	☐	
8.	Այլ փաստաթղթեր *(անհարժեշտ է թվարկել)*			